ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19 մայիսի 2026թ. **N 180-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ 13.05.2026Թ. ԴԻՄՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում քննարկման առարկա են հանդիսացել «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումում ներկայացված հետևյալ հանգամանքները.

1) «Իրազեկ քաղաքացիների միավորում» օգտատիրոջ ֆեյսբուքյան էջում առկա է գրառում՝ «Այսօր՝ մայիսի 4-ին, Մարզահամերգային համալիրի հարակից տարածքում տեղի է ունեցել բողոքի ակցիա: «Իրազեկ քաղաքացիների միավորումն» աերոնկարահանման միջոցով իրականացրել է ակցիայի մասնակիցների հաշվարկ, որի արդյունքում պարզվել է, որ 15:40-ի դրությամբ ակցիայի անցկացման վայրում և հարակից տարածքներում գտնվել է շուրջ 300 մարդ: Ակցիային արդեն միացել էին նաև «Հայաստան» դաշինքի կողմնակիցները: Նկարահանումն իրականացվել է անձրևից հետո, երբ մասնակիցները դուրս էին եկել գետնանցումից: Հաշվարկն իրականացվել է մասնակիցների անհատական հաշվարկի միջոցով:» (https://www.facebook.com/share/p/17QqosWMNC/?mibextid=wwXIfr): Միաժամանակ, դիմումին կից ներկայացված է եղել «Daniel Ioannisyan» օգտատիրոջ ֆեյսբուքյան էջի էկրանատպվածք, որում պատկերված է վերը նշված գրառումը, որի վերևի հատվածում առկա է՝ «300 հոգին մի քանի հազար մարդու շուխուռ են հանում, մի 20 հազար մարդու չափ էլ հիստերիա» բովանդակությամբ գրառում,

2) «Daniel Ioannisyan» օգտատիրոջ ֆեյսբուքյան էջում առկա է գրառում՝ «Այսօրվա միջոցառումը զուգորդվում էր ռուսաստանյան ծագման ստերի, մանիպուլացիաների, ԱԲ-գեներացրած ֆեյքերի, ինչպես նաև տրոլերի կազմակերպված խմբերի գործողություններով…» (https://www.facebook.com/share/p/1E83sBaaX1/?mibextid=wwXIfr):

Ուսումնասիրելով ներկայացված հանգամանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

2. Սույն որոշման 1-ին կետում ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նյութերում ներկայացված հանգամանքները վերաբերվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմում դիտորդական առաքելություն իրականացնող «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությանը և դիտորդ Դ.Իոաննիսյանին:

3. Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի ներքո ներկայացված հղումը՝ https://www.facebook.com/share/p/17QqosWMNC/?mibextid=wwXIfr, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ հղմամբ տեղադրված է Իրազեկ քաղաքացիների միավորման աերոնկարահանման միջոցով իրականացրած, մայիսի 4-ի ակցիայի մասնակիցների հաշվարկի արդյունքները:

«Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս.Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումին կից ներկայացվել է էկրանատպվածք, որի մեջ երևում է Իրազեկ քաղաքացիների միավորման հրապարակման վերաբերյալ՝ «300 հոգին մի քանի հազար մարդու շուխուռ են հանում, մի 20 հազար մարդու չափ էլ հիստերիա» գրառումը, որի վերին հատվածում նշված է «Daniel Ioannisyan»:

4. Ուսումնասիրելով սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ներքո ներկայացված հղումը՝ https://www.facebook.com/share/p/1E83sBaaX1/?mibextid=wwXIfr, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ հղմամբ առկա է հետևյալ բովանդակությամբ գրառում՝

«Այսօրվա միջոցառումը զուգորդվում էր ռուսաստանյան ծագման ստերի, մանիպուլացիաների, ԱԲ-գեներացրած ֆեյքերի, ինչպես նաև տրոլերի կազմակերպված խմբերի գործողություններով:

Այս առումով շատ կարևոր է փաստեր ստուգողների գործողությունները, որոնք բացառապես փաստահեն ու ապացուցման բարձր նշաձողով են անդրադառնում այդ ստերին:

Որոշ նյութեր կդնեմ մեկնաբանություններում:»:

Գրառման վերին հատվածում նշված է «Daniel Ioannisyan», որպես տվյալ գրառումը կատարելու ժամկետ մատնանշած է «4 մայիսի,ժամը 23:27», գրառման տակ առկա են մեկնաբանությունների այլ հղումներ:

Սույն հղման էկրանատպվածքը ներկայացված է նաև «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումին կից:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված հանգամանքների կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 19.05.2026թ. նիստին ներկայացած՝ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը դիտորդական առաքելության դիտորդ

Դանիել Իոաննիսյանը նշեց, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում ներկայացված հանգամանքներում խոսքն ուղղված չի եղել որևէ քաղաքական ուժի, այլ վերաբերվել է Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի կապակցությամբ անցկացվող միջոցառմանը: Պատասխանելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի հարցին առ այն, թե արդյո՞ք արտաքին քաղաքականության վերաբերյալ հնչեցրած գնահատականը չի նշանակում աջակցել կամ չաջակցել այն քաղաքական ուժերին, որոնք իրենց նախընտրական քարոզչության շրջանակներում ներկայացնում են իրենց մոտեցումները արտաքին քաղաքականության վերաբերյալ, Դ. Իոաննիսյանը նշեց, որ իր հնչեցրած գնահատականը տրվել է միջոցառմանը, որի մասնակիցներին այդ պահին միավորել են միայն միջոցառման ժամը և վայրը, և բովանդակությանը որևէ անդրադարձ չի կատարվել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հնչեցված հարցին ի պատասխան առ այն, որ գրառման մեջ հիշատակված «հիստերիա» բառը գնահատողական է, Դ. Իոաննիսյանը պատասխանեց, որ թեև նման արտահայտությունը պատեհ չէ հասարակական գործչին, սակայն վերաբերմունքը դրսևորված էր միայն երևույթին:

Դիտորդ Դ. Իոաննիսյանը, անդրադառնալով սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքին, նշեց, որ, իր գնահատմամբ, թեև ՌԴ-ն փորձում է միջամտել ՀՀ ընտրություններին, սակայն իր հրապարակային խոսքը վերաբերվում էր միայն այդ երևույթին, և ուղղված չէր որևէ քաղաքական ուժի օգտին կամ դեմ:

6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց անվանումները չեն ասոցացվում թեկնածուների կամ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումների հետ, որոնք օրենքով սահմանված կարգով հրապարակել են իրենց գործունեության վերջին տարեկան հաշվետվությունը, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ անդամ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ չեն կազմակերպում կամ չեն իրականացնում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ քարոզչություն, և որոնք հավատարմագրման դիմումի մեջ բացահայտում են դիտորդական առաքելության ֆինանսավորման աղբյուրները:»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվում է, որպեսզի հավատարմագրվելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները ներկայացնեն իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին:

Միաժամանակ, Ընտրական օրենսգրքով սահմանված են նաև դիտորդի և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) լիազորու-թյունների դադարման հիմքերը (Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-րդ մաս):

Ընտրական օրենսգրքով սահմանված են նաև դիտորդների իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող սահմանափակումներ: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դիտորդը, այցելուն իրենց իրավունքներն իրականացնելիս պարտավոր են դրսևորել քաղաքական չեզոքություն, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները:»:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները.

1) որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր,

2) որոնց անվանումները չեն ասոցացվում թեկնածուների կամ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումների հետ,

3) որոնք օրենքով սահմանված կարգով հրապարակել են իրենց գործունեության վերջին տարեկան հաշվետվությունը,

4) որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ անդամ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով,

5) որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ չեն կազմակերպում կամ չեն իրականացնում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ քարոզչություն

6) որոնք հավատարմագրման դիմումի մեջ բացահայտում են դիտորդական առաքելության ֆինանսավորման աղբյուրները,

7) որոնք հավատարմագրվելու վերաբերյալ իրենց դիմումը ներկայացնելիս ներկայացրել են իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին:

Նշված բոլոր պահանջների պահպանումը պարտադիր է, և դրանց չպահպանելը հանգեցնում է հավատարմագրվելու մասին դիմումը մերժելուն, իսկ դիտորդական առաքելությունը հավատարմագրված լինելու դեպքում՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելուն:

Այսպես, Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4.1-րդ մասի համաձայն՝

«4.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: Հավատարմագրումն ուժը կորցրած է ճանաչվում նաև այն դեպքում, երբ համապատասխան կազմակերպությունը խախտում է սույն հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերության պահանջները, այդ թվում՝ օրենքով կամ կազմակերպության կանոնադրությամբ այդ

կազմակերպությունը ներկայացնելու լիազորությամբ օժտված անձանց, կառավարման մարմինների անդամների, բացառությամբ ժողովի անդամների, կողմից կամ այլ եղանակներով նշված պահանջների խախտման միջոցով: Եթե սույն մասում նշված դեպքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություն-ներից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը մի մասով ուժը կորցրած ճանաչվելու արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ կազմակերպություն, ապա այդ կազմակերպությունը համարվում է հավատարմագրված որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Սույն հոդվածի 1.1-ին մասում առկա հանգամանքները դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելու-թյուն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումից հետո ի հայտ գալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրված դիտորդների ցանկից հանում է որպես դիտորդ հանդես գալու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալները: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչվելու և հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ծանուցվում են մեկ օրվա ընթացքում:

Սույն հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերության պահանջները խախտած դիտորդի տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հանվում են հավատարմագրված դիտորդների ցանկից:»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում քննվող հանգամանքների վերաբերյալ նյութերի ուսումնասիրությամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողո-վում հավատարմագրվել է 09.03.2026թ.: «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի (որի կազմում ընդգրկված են «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը, «Ուղղակի Ժողովրդավարություն» Ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման հասարակական կազմակերպությունը) կողմից հավատարմագրման ներկայացված դիտորդների ցանկում ընդգրկած է եղել նաև դիտորդ Դ. Իոաննիսյանը:

Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումն առ այն, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեցող կազմակերպությունները չպետք է աջակցեն թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), որպես կազմակերպության և դիտորդի վարքագծի դրսևորման իրավական հիմք սահմանված է նաև Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերությամբ և 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներում:

Այսպիսով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ.

1) դիտորդն իր՝ որպես դիտորդի իրավական կարգավիճակը ձեռք է բերում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո,

2) դիտորդը պարտավոր է դրսևորել քաղաքական չեզոքություն, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված որևէ հարցի նկատմամբ,

3) հավատարմագրման մասին դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելու պահից հասարակական կազմակերպությունը և հիմնադրամը, ինչպես նաև նրանց դիտորդները պարտավոր են պահպանել դիտորդական առաքելության վարքագծի կանոնները, դրսևորել քաղաքական չեզոքություն, չկազմակերպել կամ չիրականացնել քարոզչություն կամ հակաքարոզչություն, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված որևէ հարցի նկատմամբ:

Նշված արձանագրումները թույլ են տալիս եզրակացնելու, որ եթե հավատարմագրվելուց հետո չեն պահպանվում Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերության և 32-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ապա տվյալ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը կորցնում է դիտորդական առաքելություն իրականացնելու իր իրավունքը, իսկ դիտորդի տվյալները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հանվում են հավատարմագրված դիտորդների ցանկից:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմում ընդգրկված «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության վերաբերյալ սույն վարչական վարույթի շրջանակներում ներկայացված հանգամանքներում Ընտրական օրենսգրքի պահանջների խախտում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի արձանագրել:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ, արձանագրված փաստական հանգամանքների գնահատմամբ և դիտորդ Դ. Իոաննիսյանի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 19.05.2026թ. նիստին ներկայացված դիրքորոշումների հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն վարչական վարույթի շրջանակներում

քննված հանգամանքներում դիտորդին ներկայացվող՝ Ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումով ներկայացված հաղորդումներով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 19
ք. Երևան